ՆԱԽԱԳԻԾ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

## ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«-----» ---------- 2014թ. N-----Ա

### ՈՐՈՇՈՒՄ

### ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 26-Ի N161-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով՝

**Երևան քաղաքի ավագանին որոշում է.**

1. Երևան քաղաքի ավագանու 2010 թվականի նոյեմբերի 26–ի «Երևանի վարչական շրջանների ղեկավարներին կից խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների անհատական կազմերը հաստատելու մասին» N161-Ա որոշման 1-ին կետով հաստատված

1) N4 հավելվածում «Բարֆյան Ռազմիկ - Դավթաշեն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի քարտուղար» և «Վարդանյան Քրիստինե –Դավթաշեն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի բաժնի պետ» բառերը համապատասխանաբար փոխարինել «Ռուսլան Բաղդասարյան – Երևան քաղաքի Դավթաշեն վարչական շրջանի ղեկավար» և «Հայկ Բասիլյան – Երևան քաղաքի վարչության ոստիկանության Մաշտոցի բաժնի անչափահասների գործերով բաժանմունքի պետ» բառերով:

2) N 10 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

3) N11 հավելվածում «Ջանիկ Միքայելյան» բառերը փոխարինել «Արտաշես Մանուկյան» բառերով:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

# ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

¦ º ð º ì ² Ü ø² Ô ² øÆ ² ì ² ¶ ² Ü à ô 2010 Â ì ² Î ² ÜÆ Ü à Ú º Ø ´ º ðÆ 26-Æ
N 161- ² à ð à ÞØ ² Ü Ø º æ öà öà Êà ô ÂÚà ô Ü Î ² î ² ð º È à ô Ø ² êÆÜ § º ð º ì ² Ü
ø² Ô ² øÆ ² ì ² ¶ ² Ü à ô à ð à ÞØ ² Ü Ü ² Ê² ¶ Ì Æ ÀÜ ¸ à ô Ü Ø ² Ü ² ÜÐð ² Ä º Þî à ô ÂÚ² Ü
ì º ð ² ´ º ðÚ² È

Երևան քաղաքի ավագանու 2010 թվականի նոյեմբերի 26-ի «Երևանի վարչական շրջանների ղեկավարներին կից խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների անհատական կազմերը հաստատելու մասին» N161-Ա որոշմամբ հաստատվել են խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների անհատական կազմերը:

Երևան քաղաքի ավագանու վերը նշված որոշմամբ հաստատված Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն, Նուբարաշեն և Դավթաշեն վարչական շրջանների աշխատակազմերի ղեկավարներին կից հանձնաժողովների անհատական կազմերում համապատասխան փոփոխությունների կատարումը պայմանավորված է հանձնաժողովի անդամ հանդիսացող աշխատակիցների զբաղեցրած պաշտոնից ազատվելու, հանձնաժողովի կազմում փոփոխություն կատարելու, հանձնաժողովում ընդգրկվածության և գործունեության լիարժեքությունն ապահովելու, ինչպես նաև նշված հանձնաժողովների աշխատանքներն ավելի արդյունավետ կազմակերպելու և իրականացնելու հանգամանքներով:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

## Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

**«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 26-Ի N161-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

«Երևան քաղաքի ավագանու 2010 թվականի նոյեմբերի 26-ի N161-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

## Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

**«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 26-Ի N161-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

«Երևան քաղաքի ավագանու 2010 թվականի նոյեմբերի 26-ի N161-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն առաջանում:

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ** **Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ**

**Հավելված**
**Երևանի ավագանու**
2014թ. --------…..-ի
**N ___Ա որոշման**

**«Հավելված** 10
**Երևանի ավագանու**
2010**թվականի նոյեմբերի** 26-ի
**N**161-**Ա որոշման**

**Երևանի Նուբարաշեն վարչական շրջանի ղեկավարին կից խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի անհատական կազմը**

| | |
|---|---|
| **Հանձնաժողովի նախագահ**<br>Աշխեն Վարդանյան | /Նուբարաշեն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի ընդհանուր բաժնի պետ/ |
| **Հանձնաժողովի քարտուղար**<br>Մարինե Առաքելյան | /Նուբարաշեն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի իրավաբանական բաժնի գլխավոր մասնագետ/ |
| **Հանձնաժողովի անդամներ**<br><br>Նոնա Պետրոսյան | /Նուբարաշեն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի սոցիալական ապահովության, առողջապահության և ծրագրերի բաժնի գլխավոր մասնագետ/ |
| Գոհարիկ Ոսկանյան | /Նուբարաշեն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի բաժնի գլխավոր մասնագետ/ |
| Արևալույս Թևոսյան | Համալիր սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոնի համակարգող |